Իրավական ակտի նախագծի անվանումը

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԸ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

Քննարկվել է
22.01.2024 - 06.02.2024

Տեսակ
Որոշում

Ոլորտ
Քաղաքաշինություն

Նախարարություն
Քաղաքաշինության կոմիտե

Քվեարկության արդյունքներ

10 կողմ 9 դեմ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԸ/ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ՊԻՏԱՆԻ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ

h/h	Առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	,,Քաղաքաշինություն և տնտեսություն,, ՀԿ23.01.2024 13:18:35	ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից պարբերաբար ներկայացվում է շենքերի և շինությունների անձնագրավորման գործընթացին, այդ թվում նաև	Ներկայացված եզրահանգումներն անհիմն են և իրականությունից դուրս: Առաջարկում ենք	

		շենքերի և շինությունների տեխնիկական վիճակի հետազննության վերաբերող որոշման նախագծեր, որոնց վերաբերյալ բոլոր դեպքերում մանրամասն ներկայացրել ենք մեր դիրքորոշումը: Այդ նախագծերից շատերը ստացել են իրավական ակտի կարգավիճակ: Այն, որ այդ նախագծերի նման կերպով մշակումը ժամանակի և միջոցների զուտ վատնում է, բազմիցս հիմնավորել ենք: Նշվածը հիմնավորվել է նաև սույն Նախագծի «Հիմնավորում» բաժնի 1.2-րդ կետում՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից նշելով, որ «Մինչ այժմ ՀՀ պետական և համայնքային	ուսումնասիրել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվիրատվությամբ անձնագրավորման և տեխնիկական վիճակի հետազննման գործընթացին առնչվող ՀՀ կառավարության 03.03.2022թ N250-Լ որոշմամբ նախատեսված միջոցառումները, դրանց փուլային գործընթացը:	

		բյուջեների միջոցների սահմանափակ լինելը կամ ներդրումային համապատասխան ծրագրերի սակավությունը՝ խոչընդոտ է հանդիսացել թե՛ անձնագրավորման, և թե՛ դրանից բխող գործընթացների նախաձեռնման և իրականացման համար»: Նախագծում որևէ տեղեկատվություն չկա այդ խոչընդոտների վերացված լինելու մասին, այսինքն նույն ոճով տարիներ անց նույնպես կարձանագրվի, որ գործընթացների նախաձեռնումը և իրականացումը չի կատարվել խոչընդոտների պատճառով: Հատկանշական է, որ բազմաբնակարան բնակելի շենքի տեխնիկական վիճակի		

		հետազննության պատվիրատուն ըստ Նախագծի այս դեպքում ևս պետք է լինեն շենքի բնակիչները: Հաշվի առնելով, որ քանդման ենթակա շենքերում բնակվում են սոցիալապես խոցելի խավի ներկայացուցիչները, ապա նրանց համար շենքի տեխնիկական վիճակի հետազննության համար անհրաժեշտ միջոցների տրամադրումը մեծ ֆինանսական բեռ է լինելու: Հետևաբար այս խավի համար անհեռանկար ֆինանսական բեռ ավելացնելը անթույլատրելի է: Առաջարկում ենք նախագիծը հանել շրջանառությունից:		
2	Hayk Hwvsepyan25.01.2024 14:03:07	Նախագծում հաշվի առնված չեն կոռուպցիոն ռիսկերը: Ենթադրենք	Նախագծով նախատեսված են	Իսկ ինչ վերաբերում է

		փոքր կենտրոնում կա շենք, որը ցանկանում են քանդել: Հանձնաժողովի միջոցով այն ճանաչում են կազմաքանդման ենթակա, իսկ շենքի բնակիչները մնում են դրսում: լուծում չի առաջարկվում: Այս օրինագիծը ընդունելու դեպքում Կոնդի 80% կարելի է այս ճանապարհով քանդել:	սահմանափակումներ, որոնք վերաբերում են պատմական միջավայրին և հուշարձանային համալիրներին, դրանք ամրագրված են օրենքով: Բացի այդ՝ մասնավորների պարագայում շենքի տեխնիկական վիճակի ուսումնասիրությունը պետք է նախատեսվի սեփականատերերի նախաձեռնությամբ, իրենց իսկ միջոցների հաշվին՝ քանի որ հետազննման աշխատանքները	մասնավոր սեփականատերերի կողմից կազմաքանդման ենթակա և մարդու կյանքի համար սպառնալիք հանդիսացող բնակելի շենքի/շինության վերաբերյալ կայացվող որոշումների կատարմանը և դրա հետ սեփականատիրոջ անհամաձայնո

			իրականացվում են պայմանագրային հիմունքներով, լիցենզավորված կազմակերպությունների կողմից: Պետական և համայնքային նշանակության շենքերի մասով նման պայմանագրերը կկնքվեն պետության և համայնքի միջոցների հաշվին, իրենց իսկ նախաձեռնությամբ: Միաժամանակ՝ քանդման կամ կազմաքանդման աշխատանքները նախատեսվում են	ությանը, ապա Նախագիծը կհամալրվի կարգավորող դրույթով այն մասին, որ սեփականատիրոջ կողմից նմանատիպ բնակեցման վայրի հետագա շահագործման դեպքում պետությունը որևէ պարտավորություն չի կրի:

			հաստատված ծրագրերի՝ ծրագրային առաջարկների շրջանակներում, որոնք պետք է հիմնավորված լինեն սահմանված կարգով, այդ թվում բնակելի տների մասնավոր սեփականատերերի համար ընդունելի առաջարկներով (ֆինանսական միջոցների մասնակի կամ ամբողջական փոխհատուցման և/կամ որևէ այլ տարբերակի): Նախագծով նախատեսված	

			գործընթացը ենթադրում է կարճաժամկետ և հեռանկարային ծրագրերի մշակում՝ ֆինանսական գնահատականով, սակայն այլ իրավական ակտի՝ ծրագրի ներքո:	

Վերը նշված որոշման նախագիծը քննարկվել է www.e-draft.am կայքում 2024 թվականի հունվարի 22-ից մինչև փետրվարի 6-ը: Քննարկել է ընդամենը 19 օգտատեր, որից կողմ է 10 (53%):